ՍԳԻ ՁԱՅՆԱԽԱԶԵՐԸ

X-ի. Թարգմ. ֆրանսերէնից.

—

Do (*Առաջին ամիս*)

Ողորմած Տէր

Շնորհակալ եմ Ձեզանից Ձեր անվերջ ցաւակցական և համակրական մխիթարութիւնների համար։ Ես ընդ միշտ, ամբողջովին յանձնուել եմ իմ ծանր վշտին և աղմկալից աշխարհը այլ ևս ինձ համար գոյութիւն չունի։ Այրի կնոջ պարտականութիւնը, նոյնպէս և իմ սրտի ցանկութիւնը—ստիպում են ինձ առանձնանալ և լռութեան մէջ անձնատուր լինել այն մարդու թանկագին յիշատակին, որը, ծաղիկ հասակում, վաղաժամ թողեց այս անցաւոր և ունայն վշտալից աշխարհը։ Սև զգեստը և երկար մետաքսեայ քօղը այժմ կը լինեն իմ սովորական հանդերձը և ոչ մի կողմնակի գաղափար չի կարող ցրուել իմ հոգու թախիծը։ Ընդունեցէք, շնորհակալութեանս հաւաստին Ձեր հոգատարութեան համար։ Իշխանուհի՝ Հոֆբուրգեան։

Ré (*Երկրորդ ամիս*)

Ամենաբարի Պարոն

Ձեր ցանկութիւնը, որ ստիպում էք ինձ ընդունել, թէ հաճոյական է և թէ միանգամայն վախեցնում է ինձ։ Եթէ դուք, մի փոքր մտածէք՝ անկասկած կը հասկանաք իմ առանձնութեան պատճառը։ Ես չեմ ուզում, որ ինձ դատապարտեն. — «մի դատապարտէք, ասում է աւետարանը և չէք դատապարտուիլ»։ Ինձ միշտ վրդովեցնում էին այն թեթևամիտ այրի կանայք, որոնք մտածում էին լոկ՝ վայելչութիւնների մասին. այն ինչ պէտք է վաղուց մոռանային դրանց։ Ո՛չ մի րոպէ ես չեմ կամենում նմանուել այդ տեսակ անձանց. բայց եթէ, երբեմն թոյլ եմ տալիս ինձ, առժամանակ մի փոքր հեռանալու տխուր մտածմունքներից, միայն նրա համար, որ տանեմ մի փունջ

ծաղիկներ, ցանելու թանկագին դամբանի վերայ, որտեղ հանգչում է իմ սրտի սէրը, և անցկացնել մի բոպէ նրա մօտ, որին քիչ առաջ իմ սիրտը պատկանում էր ամբողջովին։ Շնորհակալ եմ Ձեր բարի մտադրութիւնների համար և համարում եմ Ձեր այցելութիւնը ինձ արդէն կատարած։

Իշխանուհի՝ Է. Հոֆբուրդեան.

Mi (Երրորդ ամիս)

Բարի բարեկամ

Դուք, այնուամենայնիւ կամենում էք այցելել ինձ։ Չեմ կարող ես արտայայտել թէ, Ձեր կարեկցութիւնը իմ ծանր վշտի բոպէներին, որ աստիճան ուրախացնում է ինձ։ Սակայն, ազաչում եմ, այլ ես այն կնոջը մի մտարերէք, որը հեռացել է աշխարհի զուարճութիւններից։ Իր ժամանակին, երբ կենդանի էր իմ թանկագին ամուսինը, ես բաւական ուրախութիւններ տեսել եմ։ Այժմ, իմ բաժինն է.-սգալ և արտասուել։ Այո, ինձ վիճակուած է սուգ և արտասուք։ Օգտուեցէք կեանքի շնորհած բարիքներով, քանի դեռ նա Ձեզ ժպտում է. և մի թունաւորէք Ձեր մատաղահաս երիտասարդութիւնը մի անմխիթար այրի կնոջ շրջանում, որ կը խաւարեցնէ նրան։ Ես այն աստիճան եսասէր չեմ, որ ստիպեմ ուրիշներին լալու և ինձ հետ միասին տխրելու։ Սեղմում եմ Ձեր ձեռքը։

Կոմսուհի Էլեոնորա Հոֆբուրդեան

Fa (Չորրորդ ամիս)

Սիրելի բարեկամ.

Պէտք է խոստովանեմ, որ Ձեր փաստերը շատ հիմնաւոր են։ Դուք, որպէս կրթուած և զարգացած մարդ, հեշտութեամբ կարողացաք յաղթահարել իմ բոլոր նախապաշարումները։ Է՜հ, ինչ արած, եթէ այդպէս է, ուրեմն համեցէք։ Երևի այդ հաճելի է Աստուածային Նախախնամութեան։ Միայն նախազգուշացնում եմ, որ Դուք չէք գտնիլ ինձ մօտ ոչ վայելչութիւն, ոչ էլ մի որև է զուարճութիւն։ Լուրջ խօսակցութիւն և տխրութիւն —ահա, թէ Ձեզ ինչն է սպասում։ Գուցէ ես վարւում եմ որպէս մի եսասէր, որ թոյլ եմ տալիս Ձեզ այցելելու ինձ—յուսալով որ Ձեր ներկայութիւնը մի փոքր կը ցրէ մռայլ մտքերս, այն ինչ, Դուք պէտք է տխրէք մի սևազգեստ կնոջ շրջանում։ Բայց, Դուք ինքներդ էք ցանկանում այդ և մեղքը Ձերն է. յամենայն դէպս, այսօր՝ ես ամբողջ երեկոյ տանն եմ և Ձեզ եմ սպասում։ Ձեր բարեկամուհի՝ Էլէոնորա Հոֆբուրդեան

Sol (Հինգերորդ ամիս)

Իմ թանկագին բարեկամ

Դուք արդարև իրաւացի էք. Ձեր այցելութիւնը ինձ շատ և շատ օգուտ բերեց։ Նա իմ սրտի մէջ շաղ տուեց բուժիչ բալասան և մեղմացրեց իմ վշտերի դառնութիւնը։ Ցաճախեցէք ինձ որքան կարելի է շուտ-շուտ. Դուք դրանով ցոյց տուած կը լինիք իսկական ողորմածութիւն։ Սակայն վախում եմ թէ, Դուք տխրէք դժբաղդ և վշտացեալ այրու մօտ։ Եթէ, իմ ասածը ճշմարիտ է, մի զոհաբերէք Ձեր անձը. հակառակ դէպքում, իմ տան դռները բաց են միշտ և Դուք կը լինիք ցանկալի հիւր ինձ համար։ Ձեր հաւատարիմ բարեկամուհի՝

Էլէոնորա Հ.

La (Վեցերորդ ամիս)

Իմ թանկագին և անկեղծ բարեկամ

Այդ ինչ եմ լսում. Դուք արդէն մտածում էք ամուսնութեան մասին և ցանկանում էք միացնել Ձեր փայլուն 27 տարին իմ պառաւական 28 տարու հետ. մթթէ կարելի է այդ։ Այդքան բարութիւն, այդչափ խղճահարութիւն, չեն կարող տեղաւորուել մարդկային սրտի մէջ։ Բայց գլխաւոր հարցը նրանումն է, թէ, արդեօք ես իրաւունք ունիմ ընդունելու Ձեր զոհաբերութիւնը։ Արդեօք, ես կարող եմ համարձակուիլ իմ կեանքի մայր աշնան օրերին քաղելու Ձեր վառ գարնան վարդերը։ Բացի դրանից, ինչպէս Դուք ևս լաւ գիտէք, մենք ոչինչ չենք կարող անել օրէնքի հիման վերայ, մինչև տասնամսեայ սուգը չը վերջանայ։ Իսկ այժմ, դժբաղդաբար դեռ վեցերորդ ամիսն է։ Դուք դեռ ժամանակ ունիք յետ կանգնելու այդ ասպետական քայլից։ Վստահօրէն հաւատացնում եմ, որ ես ընդդէմ չեմ լինիլ Ձեզ և ընդ միշտ կը պահեմ սրտումս Ձեզ համար երկրորդ... ոչ, ոչ, անկեղծ լինենք միմեանց հետ, առաջին տեղը...

Ձեր՝ Էլէոնորա

Si (Եօթերորդ ամիս)

Պաշտելիդ իմ

Դարձեալ երեք ամիս, դարձեալ երկար, ձիդ ամիսներ և ես վերջապէս ընդմիշտ կը լինիմ քո դերին։ Ա՜խ, Գուստաւ, մթթէ դու այժ չունէիր սպասելու մի փոքր ևս, որ չը դայթակղեցնէիր ինձ, թշուառ այրի կնոջս, որին սէրը դարձրեց անզգամ և անօգնական։

Օ դարձեալ երեք ամիս. բայց, խնդրեմ ասես, թանկա-

գին բարեկամ. լաւ չէր լինի եթէ մենք գնայինք ամուսնանալու Անգլիա, անկասկած այն տեղ կը գտնուէին ամուսնացած բարի քահանաներ, որոնք կը հասկանային իմ անհամբերութիւնը։ Սակայն, այս ինչ եմ ասում. ես գժուել եմ բոլորովին... Ոհ, եթէ իմ խօսքերը լսէր մայրս... Ո՛հ, ոչ, Գուստաւ, թող ինձ սուգը պահեմ մինչև վերջ, ի պատիւ օրէնքի և աշխարհային քաղաքավարութեան։ Մի՞թէ դու, իմ պահապան հրեշտակս, միշտ ինձ հետ չե՞ս։ Եղեմական դրախտի դռները լայն բացուած են մեզ համար. մի՞թէ արժէ շտապով անցնել նրանց միջից, քանի որ ուրախալի է նաև շէմքում։ Քո փոքրիկ՝

Նոնոթ

ԹԱՐԳՄ. Ֆ. ԱՇՈՏ.